

ԴՐՈՔ. Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

**ԽԱԼԴԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

9(47.925)

2126

u-17

Ամսկէսը իւ.

համարակա համարու-

հարմար 1939

15 հր

852

59

9 (566)

ՊՐՈՖ. Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

V

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵ 1961 թ.

A II
34110

ԽԱԼԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2126



Խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈԹՅԱՆ

Տեխ. Խմբ. Խ. ԽԱԶԱՏԻՅԱՆ

Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավիտի լրագրի՝ Ն.—2827 Գառվեր Ա 103, Տիրած 1500

Հանձնված է արտադրության 19 փետրվարի 1939 թ.

Ստորագրված է տպագրելու 19 Մարտի 1939 թ.

Մանկավարժական Խորհրդատի տպարան, Մարքոսի փող. Ա 17, Յերեան

Պատմութեան արքայութիւնները

Խալդական պետութիւնն առաջացել է մեր թվարկութիւնէնից առաջ IX դարի սկզբին, նա բռնում էր Հայկական բարձրավանդակի տարածութիւնը հյուսիսում՝ Սեանի լճից մինչև Վանի լիճը՝ հարավ-արև-մուտքում և Ուրմիայի լիճը՝ հարավ-արևելքում:

Խալդական հասարակութեան պատմութեան հիմնական աղբյուրներն են սեպագիր հուշարձանները, վորոնք հասել են մեզ ասորեստանյան և ապա խալդական թագավորներից: Ասորեստանյան սեպագի արձանագրութիւնները, վորոնք հիշատակում են խալդերի մասին, սկսվում են X դարից մեր թվարկութիւնէնից առաջ, իսկ բուն խալդական արձանագրութիւնները յերեւում են IX դարից: Վերջիններն սկզբում գրված են յեղել ասորեստանյան լեզվով ու սեպագրերով, իսկ IX դարի յերկրորդ կեսից արդեն գրվում են խալդական լեզվով և իրենց լեզվական հրաշքներին հարմարեցրած սեպագիր նշաններով:

Խալդական արձանագրութիւնները հայտաբերելու ու հավաքելու նպատակով առաջին հետախուզական գիտական արշավանքը ձեռնարկեց Ֆրանսական կառավարութիւնը, յերբ արդեն հայտնի էին, վոր այդպիսի հուշարձաններ գտնվում են Վան քաղաքում և շրջակայքում: Այդ գործը հանձնարարվեց գերմանացի յերիտասարդ գիտնական Շուլցին, վորը 1828 թ. Ֆրանսական կառավարութեան միջոցներով ճանապարհվեց ղեկի վան և այստեղ մեկ տարվա ընթացքում յերևան հանեց 38 արձանագրութիւններ: Մական Շուլցը չկարողացավ ավարտել իր գործը. հաջորդ տարին նա սպանվեց Զուլամերիկ գավառում:

Շուկի գյուտերը մեծ հետաքրքրություն շարժեցին Յեկոբ պալի արևելագետների շրջանում: Այնուհետև մի շարք յեկոբա-կան գիտնականներ ու Արևելքի պատմության սիրողներ անգա-ղաբ մինչև XX դարի սկզբները հետախուզումներ եյին կատարում, հայտնաբերում և ուսումնասիրում խալդական հնություններ, առաջին հերթին սեպագծե արձանագրություններ: Հիշատակենք նրանցից մի քանի ականավոր անուններ, այն է՝ անգլիացիներ Լայարդ, Կլեյտոն, Հորմուզդ Ռասսամ, ֆրանսացիներ Մյուլլեր Սիմոն, Հիվերնա, Ժակ Մորգան, գերմանացիներ Վոլդիմար Բեյլ և Լեման-Հաուպտ, ռուսաստանցիներ Մ. Նիկոլսկի, Ա. Իվանով-սկի, Ն. Մառ իր աշակերտ, իսկ այժմ ականակալու Հ. Որբելու հետ, հայերից Սմբատյան Մհարոբ (1860—1880 թ. թ.), վերջինս հայտնաբերել է մոտ 12 արձանագրություններ:

Այդ հետախուզումների հետևանքով պարզվեց՝ վոր խալ-դական արձանագրությունները վաղ միայն կինտրոնացած եյին Վանի լճի շրջանում, ուր գտնվում եր խալդերի մայրաքաղաքը, այլ և անընդհատ շարունակվում եյին մինչև հյուսիս՝ Արարատ-յան դաշտի վրայով և Սարիղամիշի ուղղությամբ մինչև Սեանի լիճը, Արագած լեռն ու Չալդեր լիճը, դեպի արևմուտք՝ մինչև Փոքր Ասիայի սահմանները, Մալաթիա, իսկ դեպի արևելք՝ մինչև Կիրիշին և Տոփդոյ, այժմյան Թուրք-պարսկական սահմա-նը: Վերջին տարիները, խորհրդային իշխանության որով մեզ մոտ հայտնաբերվեցին Նոր-Բայազետում (1927 թ.) և Յերևանի մոտակա Չարբախ գյուղի հողերում (1936 թ.) խալդական ար-ձանագրություններ: Այսպիսով մինչև այժմ հայտնաբերվել են ու հրապարակվել 200-ից ավելի խալդական արձանագրու-թյուններ:

Այդ արձանագրությունները ընթերցումը կապված եր դժվա-րությունների հետ, քանի վոր խալդական լեզուն մեզ անհայտ եր և նրա բեկառգրերի հնչյունները մնում եյին անզգծվածային Անցյալ դարի 80-ական թվականների սկզբներին մի քանի գիտնա-կանների կողմից այդ բեկառգրերը վերծանելու և կորզալու անհաջող փորձերից հետո ֆրանսացի ասորագետ Ս. Գյույարը 1880 թ. հրատարակեց մի քանի ցուցմունքներ, թե ինչպես կա-րելի յի վերծանել խալդական նշանագրերը, հիմնվելով արձանա-գրությունների գրերի բոլորի յեղրափակիչ տողերի վրա, վորոնց

միանման են և ըստ հին արձանագրությունների սովորական
ձևի, պարունակելու ելին ստերետիպ նշովական խոսքեր: Ա-
հա այդ ցուցմունքներից յիշնելով անդլիական գիտնական Ա.
Սեյսը 1882 թ. կարողացավ վերծանել ու թարգմանել այդ ար-
ձանագրությունները, առաջադրելով վերծանման իր սխտեմը,
վոր հիմնականում մինչեւ որս ել պահպանում և իր նշանակու-
թյունը:

Ա. Սեյսը կատարեց նաև խալդական քերականություն կազ-
մելու առաջին փորձը: Բայց և այնպես խալդական արձանա-
գրությունների ընթերցման ու թարգմանության մեջ մնում են
մի քանի անորոշություններ, յերբեմն ել յենթադրական ճշտու-
թյուններ, վորովհետև տակավին վերջնականորեն չեն
պարզաբանված խալդական լեզվի քերականական կա-
նոնները: Այդ ուղղությամբ վերջին տարիներում նորանոր ա-
ռաջադրություններ են լինում խալդագետների կողմից: Այժմ
գրեթե բոլորը հանգում են այն կարծիքի, վոր խալդական լեզուն
վնչ հնդկարական և և վնչ ել սեմիտական, այլ նա ինքնուրույն
լեզու յե, վորը պատկանում և կովկասյան Ժողովուրդների
լեզվախմբին: Ակադեմիկոս Ն. Մառն այդ հիման վրա խալդա-
կան լեզուն համարում և հաջթական: Ներկայումս մեզ մոտ խալ-
դական լեզվի ուսումնասիրությունն այդ ուղղությամբ առաջ և
տանում Ն. Մառի աշակերտ ակադեմիկոս Ի. Մեշյանինովը:

Վերոհիշյալ սեպագիր հուշարձանները, բացառությամբ մի-յեր-
կուսի, հայտնաբերվել են առանց հնագիտական պեղումների, մեծ
մասամբ յերկրի մակերեսին: Նախկին խալդական հասարակության
վերաբիրյալ այլ պատմական հուշարձաններ հատուկ հնագիտա-
կան պեղումներով հայտնաբերելու համար՝ շատ քիչ բան և ար-
ված: Այդ ուղղությամբ մի քանի պեղումներ են կատարել Վ.
Բելլըն ու Լեման-Հադսոնը Վանի շրջակայքում (Թոփրակ-Կալե,
Շամիրամալթի), ուր թեև գտել են բավականի հետաքրքիր ու
թանգարժեք պատմական իրեր, սակայն այդ պեղումները կատար-
վել են արգի հնագիտության պահանջներին անհամապատասխան
մեթոդներով, ուստի շատ բանով նրանք կորցնում են իրենց
նշանակությունը:

Բայց կան բավականաչափ նկարագրական հետադրու-
թյուններ խալդական դանադան հուշարձանների, վորոնք գրա-

նըվում են յերկրի յերեսին, այն է՝ քարակոփ շենքերի և կա-
ռույցքների, ամրոցների ու բերդերի և այլն: Այդպիսի աշխա-
տանքներով հայտնի յեն վերոհիշյալ գերմանացի գիտնականների՝
Վ. Բեկքն ու Լեման-Հաուպտը (1898—1899 թ. թ.), ռուս գիտ-
նականներ՝ Հ. Որբելի (1916 թ.), Մ. Նիկոլսկի և Ի. Իվանովսկի
(1896 թ.) ու Պիոտրովսկի (1933 թ.): Վերջին յերեքը նկարագրում
են Խորհրդային Հայաստանի սահմաններում գտնված խաղաղան
հնույթյունները:

Անշուշտ հնագիտական պեղումների այդ սակավությունը
մի խոշոր բաց է խաղաղական նյութական կուլտուրան մանրա-
մասնորեն պարզելու և ըստ այնմ խաղդերի սոցիալ-տնտեսական
ձևերն ու դադավարախոսական վերնաշենքը պատկերացնելու
համար: Մինչդեռ բոլոր ավալները բացահայտորեն ցույց են
տալիս, վոր գետնի խորքերում, նախկին խաղաղական ամրոց-բեր-
դերի ընակավայրերի մոտ, թափնված են մնում հարուստ հնա-
գիտական իրեր: Ահա այդ պիղած իրերը կարող եյին լրացնել
խաղաղական հասարակության պատմությունը, վորը սեպագիր
հուշարձաններում կցկտուր ու ժլատ խոսքերով և հանդես գալիս:

II

Խաղ-Ուրարտու

Խաղ ժողովրդի մասին ամենահին հիշատակումը հանդի-
պում ենք ասորեստանյան սեպածե արձանագրություններում՝
այդ ժողովրդի դեմ ասորական թագավորների վարած պատերազմ-
ների կապակցությամբ: Ասորեստանյան թագավոր Ասսուերնա-
սիրբալը (884—860 թ. նախքան մեր թվարկ.) անվանում է այդ
յերկիրն ու ժողովուրդը վոչ թե Խաղ, այլ Ուրարտու, վոր-
պիսի անունը մինչև վերջն ել պահպանվել ու գործածվել է
ասորեստանյան հուշարձաններում: Սակայն Ուրարտու անունը
մենք հանդիպում ենք նաև ավելի հին ասորեստանյան արձա-
նագրություններում, տակավին XIII դարում նախքան մեր թը-
վարկ. Սալմանասար I թագավորը (1280—1261 թ. թ.) հիշատակում
է իր նվաճումներն Ուրարտու յերկրում, վորը նրա մոտ
հնչում է Ուրուատրի անունով: Այս հնագույն

հիշատակարաններում Ուրարտու ասելով՝ պետք է հասկանալ վնչ թե խալդեր, այլ մի ընդհանուր անուն քաղաքական-պետական տերիտորիայի, վոր ներդրավում է Միջագետքի հյուսիսային մասը, այն է՝ յերկու Յեփրատների (Փրատ ու Արածանի) ավազանում ամփոփված Հայկական բարձրավանդակի մասը:

Խիստ բնորոշ է, վոր խալդերն իրենք իրենց յերեք ուրարտացի չեն անվանում նույնիսկ այն ժամանակ, յերբ Ասորեստանյան թագավորները սովորաբար այդ անունով եյին հորջորջում այդ ժողովրդին: Այս դեպքում Ասորեստանն անշուշտ Ուրարտու տերմինով վնչ թե հիթիկ, այլ աշխարհագրական իմաստավորում է տվել խալդերին, իբրև մի ժողովրդի, վոր հետագայում բարձրացավ Ասորեստանին սահմանակից հյուսիսային տերիտորիայում: Իսկ այդ հյուսիսային տերիտորիան իր քաղաքական առումով ասորեստանյան թագավորներին XIII դարից հայտնի յիւր, ինչպես տեսանք, Ուրարտու անունով: Վոր իրոք հնում յեղել է առանձին Ուրարտու յերկիր կամ ժողովուրդ, դա ակնհերև է նրանից, վոր հին հունական պատմագիրները հիշատակում են այդ ժողովուրդն ալարոտ, յերկիրը՝ Ալարոտիա անունով, վոր Ուրարտուի աղճատված ձևն է: Նմանապես այսպես փոխված Աստվածաշնչում (Բիբլիա) հանդիպում ենք Արատ, Արարատ անունով յերկիր, վոր հոմանիշ է հայկական Այրարատ կամ Արարատ նահանգին: Այսպիսով Ուրարտու-Ալարոտ-Արարատ միևնույն նշանակութունն են ներկայացնում, բայց տարբեր արտասանությամբ: Ահա ասորեստանյան արձանագրություններում միշտ գործածվող Ուրարտու կամ ուրարտացի անունը, վորով նրանք կոչում եյին IX դարից սկսած՝ խալդերին, ավանդաբար պահպանվեց նաև պատմագիտության մեջ, վորտեղ մինչև այսօր էլ Ուրարտիա և Խալդիա, կամ ուրարտացի և խալդ տերմինները կիրառվում են իբրև հոմանիշ անուններ:

Խալդ անունը տալիս եյին իրենց միայն խալդերը, կոչելով իրենց յերկիրը Խալդի ինի. այդ անունը նրանք կապում եյին իրենց գլխավոր աստված՝ Խալդի անվան հետ: Սակայն ամենահին խալդական արձանագրություններում (IX դ.) խալդական թագավորներն իրենց կոչում եյին Քթագավոր Նայիրիի և Շուռ

ըայի», իսկ հետագայում նաև «Բիաշնայի», վորից ել բղխում և հայացրած «Վան» անունը:

Հայկական բարձրավանդակը խորին հնում, գրեթե միա-
ժամանակ Ասորեստանի յերևումով պատմական ասպարիզի վրա,
հանդիսանում էր Նայիրի ժողովուրդների յերկիր: Նայիրի
անդնն առաջին անգամ հիշատակվում և Ասորեստանյան Թա-
գավոր Սալմանասար I-ի արձանագրության մեջ, վորից հետո
այդ անունը մշտապես հանդիպում ենք հաջորդ Թագավորների
արձանագրություններում: Նայիրի, վոր նշանակում և Շլրերի
յերկիր», ըստ ասորեստանյան արձանագրությունների իմաստի
իրենից միապադալ քաղաքական-պետական կազմակերպություն
չի ներկայացնում, այլ իրարից անկախ մարդեր ու ժողովուրդ-
ներ իրենց առանձին արքայիկներով: Այդ Նայիրի ժողովուրդ-
ներն, ըստ յերևույթին, դաշնակցություն եյին կազմում, վոր
հանդես եր գալիս արտաքին ընդհանուր թշնամու հարձակումների
դեմ: Ահա այդ Նայիրի յերկրների դեմ եյին անդադար պատերազմ-
ներ մղում ասորեստանյան աշխարհակալներն սկսած XV դարից:

Ուշագրավ են ասորեստանյան Թագավոր Թիգլեթ-Պիլեսեր I-ի (1115—1103 թ. նախքան մեր թվարկ.) արձանագրություն-
ները, ուր նա խոսում և Նայիրի յերկրների դեմ վարած իր պա-
տերազմների մասին, վորոնք շարունակություն եյին իր նա-
խորդների՝ Սալմանասար I և Տուկլատ-Նինիլի Թագավորների
նվաճումների և ապա հետագայում ծաղած տեղական ապստամ-
բությունների: Տիգլեթ-Պիլեսերն իր արձանագրություններում
նշում և, վոր իր դեմ ապստամբել եյին Նայիրի 23 Թագավորներ,
վորոնց թիվը հետո հասնում և 60-ի, յերբ միանում են նաև
Նայիրի մյուս յերկրները: Այս «Թագավորները», անշուշտ, իրա-
կանում յեղել են ցեղապետներ, այսինքն այնպիսի հասարա-
կությունների գլխավորողներ կամ իշխողներ, վորոնք դեռևս
գտնվում եյին տոհմատիրական կարգերի քայքայման վերջին շր-
ջանում և վորտեղ նոր եյին սկսել վարգանալ դասակարգային
հակադրությունները:

Ասորեստանյան Թագավորների անընդհատ նվաճողական
եքսպանսիան դեպի հյուսիս՝ Նայիրի յերկրները, պատճառ եր
դառնում տեղական ժողովուրդների կողմից բռնկող մշտական ա-
պստամբությունների: Այս հանգամանքներում, վորպեսզի հնա-

քաղորդ լինելու ամեն ինչ հաջող դիմադրել ասորեստանցիների ներ-
խուժմանը, թեև պարսիկները ժողովուրդների քաղաքական
միացումը, վերջը և հետզհետե զարգանալով տեղիյն ունենում ըստ
յերևույթին IX դարի առաջին կեսին: Այս քաղաքական միացու-
մը առաջանում է այն ժամանակ, յերբ Նախիրի հասարակություն-
ները սոցիալապես շերտավորված էին և, դասակարգայնորեն
տրոհված լինելով, ներկայացնում էին պետական վերուշ կազմ:
Վերոհիշյալ 23 ցեղերից մեկը, այն է՝ խալդերը, հանդիսանա-
լով նրանց մեջ ամենաուժեղն ու քաղաքակրթնապես ավելի կազ-
մավորված, անշուշտ առաջատար դեր է խաղացել ու կարողացել է
իր ազդեցություն և ապա իր գերիշխանություն ներքո առնել մյուս
ցեղերը, ներգրավելով նրանց մեկ պետականություն մեջ:

IX դարի (նախքան մեր թվարկ.) ասորեստանյան արձանա-
գրություններում հանդիպում ենք Արամի, Լուտիպրի,
Սարգուր անունները, վերոնք կոչվում էին, ըստ այդ արձանա-
գրությունների, Ուրաաուի թագավորներ և վերոնք պետք է
համարվեն խալդական պետության առաջին հիմնադիրներ: Սա-
կայն նույն ժամանակվա խալդական արձանագրություններում
Լուտիպրին և Սարգուրն իրենց անվանում են Նախիրի թագա-
վորներ: Այստեղ գտնվող գտնվում են Ուրաաու և Նախիր անուն-
ներն իբրև հոմանիշ տերմիններ և, ինչպես նկատում ենք,
վերաբերում են միևնույն պետական տերիտորիային, թեև
առաջին անունը բղխում է ասորեստանցիներից, իսկ յերկրորդը
խալդերից, վերոնք զարմանալի հետևողականությամբ բնավ չեն
հիշատակում առաջին անունը: Այստեղից յեզրակացնելու յենք,
վոր Նախիրի պետության, այսինքն նախնական թաղիայի կազ-
մավորման ժամանակ, Ուրաաուին, վոր գտնվում էր Նախիրի
յերկրների հյուսիսային մասում, այլևս գոյություն չունեի իբրև
ինքնուրույն քաղաքական յերկիր, ուստի և չի հիշատակվում
խալդական արձանագրություններում: Իսկ Ասորեստանի թագա-
վորները, վերոնք XIII դարից իրենց նվաճողական հարձակում-
ները ուղղում էին Ուրաաուի վրա, շարունակում են իրենց սո-
վորություն համաձայն՝ ավանդաբար մինչև վերջն էլ կառչել
այդ տերմինին և այդ անունը տարածում են հետագայում կազմա-
կերպված Նախիրի կամ թաղ պետության վրա: Այստեղ նշա-
րում ենք ասորեստանցիների մտայնության մեջ տրամաբանա-

կան այն դրույթը՝ *pars pro toto*, վոր մասնիկով վորոշում ե
ամբողջը, այն ե՝ Ուրարտու անունով ներկայացվում ե խալդա-
կան ամբողջությունը:

III

Խալդական պետւթյուն

Նայիրի թագավորությունը, կամ ըստ ասորեստանյան արձանա-
դրությունների, Ուրարտու թագավորությունը գտնվում եր Վա-
նի լճից գեպի հյուսիս՝ Արածանիի ավազանում ե Արամե թագա-
վորի ժամանակ, ընդարձակվելով, իր մեջ ե տռնում նաե Վանի
լիճն ու տարածվում գեպի արևելք: Նրա մայրաքաղաքը կոչվում
եր Արգասիու, վոր գտնվում եր Վանի լճից գեպի հյուսիս:

Ուրարտուն, այսինքն խալդերը, ոգավելով Ասորեստանի քա-
ղաքական թուլացումից ե ներքին անկայությունից, IX դ. վեր-
ջից մինչև VIII դ. կեսին, այն ե՝ 70 տարիների ընթացքում,
սկսում են յետ մղել Ասորեստանին ե նույնիսկ զբաղվում են
նրա տերիտորիայի հյուսիսային մասերը: Այս տարիների ըն-
թացքում Նայիրի պետության կենտրոնացումը ե թագավորների
իշխանության ուժեղացումն Արամեից սկսած՝ հետզհետե աճում ու
ամրանում ե խալդական տերիտորիայի ծավալման հետ զուգա-
հեռաբար:

Արամեից հետո հաջորդական կարգով յերրորդ թագավորը
Սարգուր Գ ե, վորն իրեն կոչում ե Լուստիպրիի վորդի. վերջինս
ել ամենայն հավանականությամբ Արամեի վորդին եր: Սարգուրի
որով (835—820 թ.թ. նախքան մեր թվարկությունը) Ուրարտուն
այնքան ուժեղացավ, վոր նա մայրաքաղաքը տեղափոխում ե
Վանի լճի հարավ-արևելյան յեզերքը, հիմնելով այստեղ Տուշպա
քաղաքը, վոր հին հայկական աշխարհագրական անուններում
պահպանվել ե Տոսպ, իսկ հին հունական պատմագրության
մեջ Տոսպիդիս անունով: Այստեղ, Վանի լճի յեզերքին Սար-
գուրը կառուցում ե, ոգտվելով բնական դիրքի հարմարություն-
ներից, մի բերդ, վորի ավերակները պահպանվել են մինչև այսօր:
Այսպիսով հիմնվում ե նոր պետություն, վոր խալդական արձա-
նագրություններում կոչվում ե Շուրայի կամ Բիայնայի թագավո-
րություն: Սարգուրի վորդի Իշպուինը մի արձանագրու-

թյան մեջ իրեն անվանում ե թագավոր Նայիրի և Շուրայի, վոր բնակում ե Տուշլա քաղաքում: Խալիվան պետության կենտրոնն աշխարհագրորեն դառնում ե Վանի լճի արևելյան յերկիրը:

Յեթե Արամին համարվում ե խալիվական պետության հիմնադիրը, ապա Իշպուխնի վորդի Մենուան (805—780 թ. թ.) հանդիսանում ե խալիվական պետության ամբողջացնողը ե թագավորական կենտրոնական իշխանության ամրապնդողն ու ծավալողը, վոր հաջողությամբ պայքարում եր Ասորեստանի նվաճողական եքսպանսիայի դեմ: Մենուայի որով խալիվական արձանագրություններում անհետանում ե Նայիրի անունը ե այնուհետև հիշատակվում ե արդեն Խալիվ անունը: Մենուան, հետևելով արևելյան աշխարհականերին, յուրացնում ե նրանց տիտղոսը՝ «արքա հզոր, արքա աստվածային, արքայից արքա», վոր ցույց ե տալիս նրա քաղաքական նշանակությունն ու դերը խալիվական պետության մեջ: Ըստ այնմ ել Բիայնան կոչվում եր «յերկրների յերկիր»:

Մենուան առաջինն եր խալիվական թագավորներից, վոր արշավում ե Անդրկովկաս ե դրավում Սևանի լճի շրջանում գտնվող Նախուրի ե Ուտարուխնի յերկրները:

Մենուան, բացի ռադմական ու քաղաքական գործունեյությունից՝ ցուցաբերում ե լայն շինարարական գործունեյություն ե արձանագրություններում, վորոնց թիվը հասնում ե մոտ 50-ի, հավերժացրել ե իր ժեմագործ կառուցումները: Նույնպիսի քաղաքական ու շինարարական մեծ գործունեյություն են զարգացնում Մենուայի վորդի Արգիշտի I (780—755 թ. թ.) ե վերջինի վորդի Սարգուր II (755—730 թ. թ.), վորոնց որով խալիվական պետությունը հասնում ե իր ծաղկման ե ուժի ամենաբարձր աստիճանին:

Արգիշտի I ե Սարգուր II իրենց նվաճողական եքսպանսիայում հասնում են արևելքում մինչև Ուրմիայի լիճը ե ապա հյուսիսում անցնելով Արաքս գետը, իրենց իշխանությունը տարածում են Անդրկովկասում, այժմյան Խորհրդային Հայաստանում, սահման ունենալով հյուսիսում Զալզըր լիճը (Լենինականից դեպի հյուսիս) ե Արագածի հարավային լանջերը, ել հյուսիս-արևելքում Սևանի լիճը: Այստեղ նրանք կա-

առեցում եյին ամրոցներ, քաղաքներ, ջրանցքներ և այլն, վորոնց մասին հիշատակում են արձանագրություններում։ Այս նվաճված յերկրում նրանց գլխավոր վարչա-առարկական կենտրոնը դառնում և Արմավիր քաղաքը, վոր այսօր մի անբնակ բլուր և, թագցրած ունենալով իր խորքերում ուրարտական հարուստ հր-նություններ։

Սակայն Սարգուր II-ի թագավորության վերջին տարիները դժբաղդ յեղան խալդական պետության համար։ VIII դարի յերկրորդ կիսին Ասորեստանը նորից սկսեց ուժեղանալ և Թիգլիտ-Պիլեսեր III-ի որով (747—728 թ. թ.) վերականգնեց իր նախկին հզորությունը։ Ասորեստանը 739 թ. հարձակումներ և ձեռնարկում խալդական պետության վրա և կարողանում և պարտված Սարգուրից յետ խլել նախկին ասորեստանյան հողերը և նույն իսկ ասպատակել խալդական պետության կենտրոնը Վանի շրջակայքով։ Վերսկսվում և կատաղի պայքար աշխարհակալության նոր ձգտումներով տարված Ասորեստանի և նույնպիսի աշխարհակալությամբ բարձրացած խալդական պետության միջև, պայքար, վոր դրեթե 70 տարի դադարել էր։ Ասորեստանի անընդհատ հարվածների տակ խալդական պետությունը սկսեց թուլանալ, միմյանց հետևից կորցնելով իր հողերը և ավաբառական ասպատակումների յենթարկվելով դրեթե մինչև 626 թ. յերբ Սսորեստանն սկսում և ինքն ել ճգնաժամային որեր ապրել։ Խալդական պետությունն այժմ ամբողջովում եր իր նախորդ սկզբնական տերիտորիալ սահմաններում, այն է՝ Բիայնայի՝ Վանյան թագավորության մեջ, Արածանիից հարավ և Վանի ու Ուրմիայի լճերի միջև ընկած տարածության վրա։

Այդ ժամանակ Առաջավոր Ասիայի քաղաքական բեմի վրա առաջ և գալիս հզոր Մեդական պետությունը, իսկ միջագետքում ել Ասորեստանի կողմից յերբեմնի տապալված Բաբելոնը վերականգնում և իր քաղաքական դիրքը։ Սրանց միացյալ հարվածների տակ 612 թ. իսպառ չքանում և պատմական ասպարիզից Ասորեստանը, վոր իր ահեղ տիրապետության ներքո յեր պահում մի ժամանակ ամբողջ Առաջավոր Ասիան։

Այս դարաշրջանում դարգացող պատմական իրադարձությունների տակ, յերբ Առաջավոր Ասիան յենթարկվում եր տակ-

նուվրայության և հեղաշրջվում եր նրա ամբողջ քաղաքական պատկերը, խաղական պետությունն իր վերջին թագավոր Ռուսա III-ի հետ մի առ ժամանակ կարողացավ պահպանել իր գոյությունը (605—585 թ. թ. նախքան մեր թվարկ.), մինչև վոր վերջնականորեն վերացավ ասպարիզից մեզ համար տակավին վոչ այնքան պարզ հանգամանքներում: Հավանական յենթադրությամբ, խաղական պետությունը հիմնահատակ կործանվեց մեղացիների հարձակումից, վորոնք նվաճեցին ու միացրին այդ տերիտորիան իրենց պետությանը: Մեղական այս նվաճման ժամանակ մեղացիների հետ ելին նաև արմենները, վորոնք նոր ելին բարձրանում պատմական ասպարիզում. ահա այդ ժամանակ, ինչպես կարելի չե կռահել ազոտ պատմական տվյալներից, արմենները հաստատվեցին խաղական նախկին պետության տերիտորիայում:

Շուրջ 300 տարի գոյություն ունեցավ խաղական պետությունը և ժողովուրդը, իրոք կարճատև պատմական կյանք մի պետության համար: Սակայն չքանալով բոլորովին պատմական ասպարիզից, նա թողել և հարուստ հիշատակ իր մասին, վոր արտահայտվում և բաղմամբով սեպած և արձանագրություններում փառահեղ կառույցներում ու անսպառ հնազիտական մնացորդներում: Այդ ամենը վկայում և արագ քայլերով քաղաքականապես յերբեմն բարձրացող և նյութական կուլտուրայի ասպարիզում զարգացող մի ժողովրդի կյանքի մասին, վոր այսօր Առաջավոր Ասիայի պատմության հետաքրքիր եջերից մեկն և կազում:

IV

Սոցիալ-սնեսական կառույցը

Հայկական բարձրավանդակի կլիմայական պայմանները և, մանավանդ, յերկրային ռելեֆն իր հովիտներով, ձորերով ու սարալանջերով, արգավանդ դաշտերն արհեստական վոռոգումով՝ ընձեռնում ելին Նայիրիի աղգաբնակությանը գերազանցորեն յերկրագործական ու անասնապահական տնտեսություն վարելու հարմարություններ: Այդ են վկայում արձանագրական տվյալներն ու հնազիտական մնացորդները: Ասորեստանյան

Աստուրնասիրբալ թագավորն իր արձանագրության մեջ նշում եւ ճնայիրիի հունձքը հնձեցի և յերկրիս համար այդ ամենը Տուսի- ա յի, Դամդամուսայի, Սինաբուրի և Տիգուի մեջ համբարեցի»։ Աստուրնասիրբալ թագավորները Նայիրիի յերկրները նվաճելիս՝ կառուցում էին այգետեղ հատուկ հսկայական շտեմարաններ, ուր հավաքում էին տեղական բնակչութունից տուրքերն ու պետա- կան հարկերը բնական արգասիքներով։ Այդպիսի շտեմարաններ կային Նայիրիի Բիտ Զամանի յերկրի Տուշահ ամրոցում։ Նույնն էին անում խալդական թագավորները։ Թոփրակ-Կալեյի (Վանի մոտ) պեղումներով գերմանացի ուրարտագետ Լեման-Հաուպտը հայտնաբերել է այդ տեսակ մասան-շտեմարանի ավերակներ, վոր գտնվում եր բլրի վրա կառուցված տաճարից մի փոքր Հեռու։ Այդ ավերակներից դուրս էին հանված մոտ 25 կալե մեծ կա- րասների բեկորներ, վորոնք ծառայում էին վոշ միայն զինի, այլ և հացահատիկներ պահելու համար։ Բացի բազմաթիվ ձեռ- քի պրիմիտիվ աղորիքներից ու սանդերից, վորոնք հայտնաբեր- վել են։ Նախկին Նայիրի յերկրում հնագիտական հետախուզում- ներով, Լեման-Հաուպտը գտել է Ժայռակոփ ամրոցներին ու բը- նակատեղիներին կից ջրաղացների հետքեր։ Ուշադրության արժա- նի յե նաև այն, վոր հնագիտական պեղումների հետևանքով հայ- տնաբերվել են խալդական մանգաղներ ու խոփեր։

Յերկրագործության մեջ հացահատիկների մշակույթին կից զարգացած եր նաև այգեգործությունը։ Հարկերի թվում մըտ- նում եր և գինին։

Յերկրագործության զարգացման ամենամեծ ապացույցն այն ջրանցքաշինարարությունն է, վոր այնպիսի հետևողությամբ առաջ էին տանում խալդական թագավորները վոշ միայն կենտ- րոնում՝ Վանում, այլ և նվաճած յերկրներում, որինակ Արագածի լանջերում, Արարատյան դաշտում՝ Արմավիր, Վաղարշապատ, Յերևան քաղաքների մոտ։ Ջրանցքներ կառուցելով, այդ թագա- վորները տնկում էին այգիներ, գլխավորապես խաղողի և խո- պան հողերը հացահատիկային մշակույթի վերածում։

Անասնապահության զարգացման մասին հասել են մեղ բավականաչափ տեղեկություններ, վորոնցից յերևում է, վոր առաջին տեղն եր բռնում վոշխարագործությունը և ապա խոշոր անասունների բուծումը, սրանց թվում նաև ձիերի։ Թե ասորես-

տանյան թագավորները Նախրիի վրա արշավելիս և թե խալ-
զական թագավորներն իրենց առգմական արշավանքների ըն-
թացքում ահագին քանակով անասուններ էյին ավար վերցնում:
Նմանապես Նախրի յերկրները վճարում էյին Ասորեստանին
հարկեր անասուններով, գլխավորապես ձիերով ու յեղներով:
Նույնպիսի հարկեր էյին վերցնում խալդական թագավորներն
իրենց նվաճած յերկրներից: Հետաքրքիր է, վոր խալդական թա-
գավոր Արգիշտի II, ճանաչելով Ասորեստանի հաղթական թագա-
վոր Սարգոնի գերիշխանությունը, տուրք էր վճարում նրան ձիե-
րով:

Սակայն գյուղատնտեսական արտադրության հետ միասին
զարգացած էր նաև արհեստագործությունը, մանավանդ խալդե-
րի մեջ: Սա մի ցայտուն ապացույց է, թե վորքան մեծ չափով
այստեղ առաջ էր գնացել աշխատանքի հասարակական բաժա-
նումը:

Արհեստների շարքում նշանավոր էր մետաղագործությունն
իր զանազան ճյուղերով: Առաջին հերթին տեսնում ենք բրոնզե ու
պղնձե իրերի արտադրություն, այնուհետև յերկաթագործություն,
վոսկեգործություն և արծաթագործություն: Ասորեստանյան ու
խալդական թագավորների ավարների մեջ գերակշռող տեղ են
բռնում պղնձե ու բրոնզե իրերը, գլխավորապես անոթներ, կաթսա-
ներ, պնակներ, կոնքեր և այլն: Նույնիսկ տուրքերի ու հարկերի
թվում հանդիպում ենք մեծ քանակով մետաղագործական ար-
տադրանքների: Ասորեստանի թագավոր Ասուերնասիրբալը մի
արձանագրության մեջ նշում է. «Ջորինների, արջառի, վոչխար-
ների, գինու, պղնձե անոթների հարկը և տուրքն առաջ-
վանից ավելի բարձրացրի»:

Մետաղագործության այդ զարգացումը բղխում էր նրանից,
վոր հայկական լեռնաշխարհը հարուստ էր մետաղահանքերով,
մանավանդ պղնձով ու յերկաթով: Այդ հանգամանքը թերևս
խթան էր հանդիսանում մետաղահանքերով վոչ այնքան հա-
րուստ Ասորեստանին ավարառու առգմարշավանքներ ուղղել
ղեպի Նախրի ու խալդական յերկրները, իրեն անհրաժեշտ մե-
տաղներ ձեռք բերելու նպատակով: Լեռնահանքերի առատու-
թյունը, նմանապես մետաղագործության հնությունն ու բարձր
զարգացումը Նախրիի, մասնավորապես խալդական յերկրում

հիմք ե ծառայել մի շարք պատմագետներին կարծիք հայտնիու, վոր բրոնզի ե ապա յերկաթի մշակման գլուտի հայրենիքը յեղել ե Հայկական լեռնաշխարհը:

Մետաղագործության հետ կապված ե զինագործությունը, վոր հիմնական նշանակութուն ուներ այնպիսի մի հասարակության համար, ինչպիսին եր խաղաղական իր անդադուր ուղղման պայմաններով:

Այնուհետե ուշադրավ ե կապագործությունը, վոր խաղերի մեջ մեծ դարգացման եր հասել, մանավանդ գունավոր կավե անոթների արտադրությամբ: Բացի այդ՝ կավից եյին պատրաստում այն աղյուսիկները, վորոնք ծառայում եյին զրեւու համար, նման մեր այժմյան թղթի:

Այդ արհեստների բարձր զարգացումը ե բազմապիստությունը մի բնորոշ փաստ ե, վորի վրա հիմնվելով կարելի յի կռահել, վոր խաղաղական հասարակության մեջ պետք ե դարգանային նաե առևտրական հարաբերություններ, թեև այդ մասին պատմական աղբյուրները դեռ ես վոչինչ չեն հաղորդում: Հայկական լեռնաշխարհն ընկած եր այն ժամանակվա տրանզիտային առեւտրի գլխավոր ճանապարհի վրա՝ Պարսից ծոցից, Միջագետքի վրայով, դեպի Միջերկրական ծովը, Փոքր Ասիա ե Սեւ ծովը: Ասորեստանն իր վաճառաշահ նիւտե մայրաքաղաքով միջնորդ առեւտրական դեր եր խաղում: Ասորեստանի անհանդիստ նվաճողական եքսպանսիան ու աշխարհակալական քաղաքականությունը բղխում եյին մասամբ հենց այդ առևտրական շահերից, վորոնք թելադրում եյին իր ձեռքի, իր անմիջական իշխանության տակ ունենալ դեպի Միլիթաֆոյունիկիա, Միջերկրական ծովը այն ժամանակվա շահաստանները, դեպի Փոքր Ասիայի ծովեզերքը ե այլուր տանող ճանապարհները, վորոնցով յերթեկում եյին առեւտրական կարավաններ տակավին Ասորեստանի նախորդ՝ Բաբելոնի տիրապետութան ժամանակ: Մեզ չեն հասել Խաղաղական դրամներ: Ուստի պետք ե յենթադրել, վոր յիթե գոյութուն են ունեցել մեր նշած առեւտրական հարաբերությունները, ապա այդ յեղել ե կամ պարզ փոխանակային առևտուր, կամ դրամի փոխաբեն գործածվել են վոսկու ե արծաթի ձուլեր ե կամ գործածվել են ասորեստանյան դրամներ:

Ահա այդ արտադրողական ուժերի զարգացման պայման-

A $\frac{\pi}{34110}$

ներում խաղաղական հասարակութիւնը դասակարգայնորեն արոհւած մի կազմ եր ներկայացնում, վոր մարմնացել եր յուրահատուկ ասիական ձեւի պետականութեան մեջ, նման Ասորեստանի, Հեթիտական և այլ պետութիւններին:

Մալդական հասարակութիւնը ձևավորվել եր վորպես բռնակալական մի պետութիւն, վորտեղ իշխանութիւնը կենտրոնացած եր դիպուտ թագավորի ձեռքին: Տիրապետող դասակարգը բաղկացած եր ռազմիկ-անվաճող տարրերից՝ ազնվական դասից, նմանապես քրմական դասից, Թագավորի գլխավորութեամբ նրանք շահագործում եյին վրէժ միայն իրենց յենթակա նվաճված բնակչութիւնը հանձինս իսկական արտադրողների, այլ և շահագործման յեղանակներից մեկն ել դարձրել եյին պատերազմը: Մալդիայի տիրապետող դասակարգի բնույթը վորոշելու համար մեզ հայտնի պատմական տվյալներում աչքի յե դարնում այն դերը, վոր խաղում եր նրա կշանքում պատերազմը: Մալդական թագավորներից մեզ հասած արձանագրութիւնները, յիժն յերբինս խոսում են վորոշ շինարարական գործերի մասին, ապա միշտ ու անվերջ հիշատակում են իրենց վարած պատերազմները, թշնամիների վրա տարած հաղթանակները, հարուստ ավարաւումներն ու գերավաճութիւնները, նվաճած յերկրներում ամբողջներ կառուցելը և այլն: Դա մի ռազմական-պարագիտային պետութիւն եր, վորի տիրապետող հասարակութիւնն իր գոյութեան նյութական միջոցը տեսնում եր ռազմական ձեռնարկութիւններում:

Սակայն միաժամանակ այդ գիշտտիչ միջոցի հետ նա կիրառում եր, հենվելով իր ուժի վրա, նաև արոտատնտեսական ճնշումն իրեն յենթակա սոցիալական խավերը շահագործելու նըպատակով: Այդ շահագործվող ներհակ դասակարգը կազմում եյին ստրուկների մասսան, գյուղացիութիւնը և ապա արհիտաւորական դասը:

Անընդհատ պատերազմները տիրապետող դասակարգի համար հարուստ գերեվարութեան աղբյուր եր դառնում: Անշուշտ այդ գերեւների ճնշող մեծամասնութիւնը մտնում եր ստրուկների շարքը, վորոնց աշխատանքը շահագործման ամենադյուրին միջոցն եր պարագիտային հասարակութեան համար: Այդ ստրուկները, ինչպես կարելի յե յիզրակացնել մի քանի արձանագրութիւններից, մեծ

քանակի եյին հասնում: Արգիշտի 1 թագավորը իր վարած պատերազմների ընթացքում նախկին Նախիրի յերկրներից գերի յեր տարել 79,936 տղամարդ, 52,381 կին, 73,512 յերեխա, 10,140 զինվոր, ընդամենը 215,969 հոգի: Սրա վորդի Սարգուր II գերի յեր տարել 4,600 տղամարդ, 23,200 կին, 10,000 պատանի, ընդամենը 37,800 հոգի:

Ստրուկները, քացի տերապետող դասակարգի սեփական տնտեսութուններում շահագործվելուց, անշուշտ ավելի մեծ չափերով գործադրվում եյին հասարակական-պետական աշխատանքներում, վոր ձեռնարկում եյին խաղական թագավորները: Հըսկայական ու մոնոմենտալ ջրանքաշինարարությունն, ամրոց-քերի գերի ու քաղաքների կառուցումները հնարավոր եյին միմիայն ստրկական աշխատանքի կիրառումով: Զարգացած մետաղագործության համար պահանջելի հում մետաղը պայմանավորված եր լիտւնային հանքերի մշակումով, վորտեղ, անտարակույս, գործադրվում եր սոսկ ստրուկների բանվորական ուժը:

Ստրկական աշխատանքի շահագործման կից միաժամանակ շահագործվում եր նաև գյուղացիական դասը: Թեև խաղական արձանագրությունները մեզ չեն տալիս ուղղակի տեղեկություններ այդ մասին, բայց մի քանի տվյալներից կարելի յե կռահել, վոր իրականում շահագործվող դասակարգի մեջ տեղ եր բռնում նաև գյուղացիությունը:

Ուղղական թագավորները, ինչպես գիտենք, տուրքեր ո հարկեր եյին հավաքում իրենց հպատակներից: Յեթե տուրքի վճարում եյին նվաճված յերկրների տեւերն ու իշխանները, ապա հարկերը գանձվում եյին իսկական արտադրողներից, վորոն կարող եյին լինել գյուղացիները, յեթե ի նկատի ունենանք վոր ժողովրդական տնտեսության հիմքը կազմում եյին յերկրագործությունն ու անասնապահությունը, այսինքն գյուղատնտեսությունը: Անտարակույս, հարկ վճարում եյին վճիթե ստրուկները, վորոնք անձնապես իրավագույն եյին և միայն իրավունք ունեկտ եյին հանդիսանում և վորոնք ի բնե պարտավոր եյին աշխատելու ստրկատիրոջ մոտ, այլ այն արտադրողները, վորոնք զբաղվում եյին գյուղատնտեսությամբ: Իսկ այդ արտադրողները գտնվելով տնտեսական ճնշման տակ, կապված եյին հողին ու դարձել եյին ճորտեր: Այդ հարկերը, ինչպես փերն արգեն նշ

ենք, հասունցվում եյին բնական արդյունքներով: Սակայն չի բացառվում և այն, վոր տիրող ստրկական աշխատանքի սկզբնական արժանաբանորեն թեկադրում եր նաև հարկի աշխատապարտ ձևը, այսինքն գյուղացին պարտավոր եր կոռային կարգով աշխատել իր տիրոջ համար: Այդ գյուղացիական հարկը, ինչպես ապացուցում և Կ. Մարքսը, արևելյան յերկրներում վերածվում ե հողային սեփականության. այստեղ հարկն ու հողային սեփական նույնանիշ են, վարովհետև հողային միակ սեփականատերը՝ ինքը պետութունն ե (K. Маркс—Капитал, т. III, II, 2, էջ 570, 1932 թ.):

Մի թեթև ակնարկ ենք գտնում Ասորեստանի Սարգոն թագավորի արձանագրության մեջ այն մասին, վոր խալդական թագավորության մեջ յեղել են յերկրագործներ, հողի մշակութով աշխատողներ: Խոսելով խալդական թագավոր Ռուսա I-ի ջրանցքաշինարարության մասին Արարատյան դաշտում, Սարգոնն ավելացնում և. «և հնչում եր բնակիչների ականջին հողագործի զվարթ յերգն այն արտերում, վորոնք մինչև այդ խոսպան եյին»:

Դառնանք այժմ շահագործվողների յերրորդ դասին, այն ե արհեստավորներին: Խալդական պետության մեջ արհեստագործության զարգացումը պետք և վերագրել աշխատանքի հասարակական բաժանման խորացման, վոր իր հերթին հետևանք եր արտադրողական ուժերի զարգացմանը: Իհարկե, արհեստների բնագավառում գործազրկում եր ստրուկների աշխատանք, բայց դա լինում եր մեծ մասամբ տնային տնտեսության մեջ, ինքնամիով, տնտեսության կարիքներն ու պահանջները լրացնելու գծով: Բացի այդ՝ ստրկատիրական հասարակութունների պատմությունից հայտնի յե, վոր ստրկական աշխատանքը յերբեք արտադրության տեխնիկայի ու առաջդիմության խթան չի յեղել: Հետևապես խալդական արհեստագործության բազմազան ճյուղերի զարգացած վիճակը պետք ե վերագրել միայն մասնագիտացած արհեստավորներին, վորոնք ընդունակ եյին կատարելագործել իրենց աշխատանքի ձևերն ու յեղանակները: Այդ արհեստավորները, սոցիալապես ստրուկներ չլինելով հանդերձ, միաժամանակ սոցիալապես արժե-

ված էյին, աշխատանքի բաժանման հետևանքով, նաև գյուղացիներից: Այնպիսի բաժանվել եր յերկրագործությունից:

Արևմտ արհեստավորները կազմում էյին առանձին սոցիալական դաս, վոր մտնում եր շահագործվող դասակարգի շարքը: Այրապիս չեր ել կարող լինել, քանի վոր տիրող հասարակական կազմը հիմնված եր յերկու ներհակ դասակարգերի արտադրական հարաբերությունների վրա, այն ե՝ մի կողմից տիրապետող ազնվական դասակարգի արտատնտեսական ճնշման ու շահագործողական յեղանակների վրա, իսկ մյուս կողմից՝ ճնշված ու յենթակա մասնաների աշխատանքից կորզվող արգյունքների վրա: Սակայն ինչպես եր արտահայտվում արհեստավորների կախումը տիրապետող դասակարգից և ինչ ձևով էյին նրանք շահագործվում՝ առայժմ զգվար ե ասել համապատասխան պատմական ավյալների բացակայության պատճառով: Հռոմեացի դիսոս մի հովանական յենթադրություն կարելի յի անել, վոր արհեստավորներն անձնապես ազատ էյին լինելու և վճարում էյին հարկ:

Ամփոփելով վերն ասածները խաղական պետության սոցիալատնտեսական ձևվերի մասին, պետք ե նշենք, վոր մեզ հասած պատմական ավյալները այնքան կցկտուր ե անորոշ են, քիստական նյութն այնքան աղքատ, վոր դեռևս զգվար ե քիչ թե շատ վորոշակի յեզրակացության հանգիս:

Զօխտելով այն հիմնական դրույթը, վոր ստրկատերերն ու ստրուկները հասարակության առաջին բաժանումն ե դասակարգելի, այնուամենայնիվ խաղական հասարակությունը չի կարելի համարել ստրկատիրական ֆորմացիա այն իմաստով, ինչպես դա յեղել ե անտիկ աշխարհի Հռոմաստանը կամ Հռոմը, ուր տիրում եր արտադրության ստրկական յեղանակը: Մենք ասումք, վոր խաղական հասարակության սոցիալական արտադրողները, բացի ստրուկներից, հանդիսանում էյին նաև գյուղացի-յերկրագործները, վստիք նույնպես կա խուճն ունեյին տիրապետող դասակարգից: Այստեղ ստրկությունը դու չեր հասել զարգացման այն աստիճանին, վոր յերկրի տնտեսության մեջ տիրապետող ձևվ դառնար: Այստեղ դեռ պահպանվում էյին ստրկության նախնադարյան ձևերը, վորոնք անկարող յեղան ասպարեղից դուրս վանելու տոնմացե:

դային համայնքի քայքայումով անաջացած գյուղական համայնքի գերը արտադրական հարաբերություններում:

Հոմանիշներու թիվը նկատվում է նաև մի շարք այլ ժողովուրդների կյանքում: Փ. Ենգելսն այդպես էր իրեն պատկերացնում ստրկության դերը հին գերման հասարակության մեջ, ասելով, Վոր գերմանական ստրկությունը չղարգացավ հասնելու անտիկ ստրկությանը: Լենինը նույնպես «Պետության մասին» դասախոսություններում նշում է «հասարակության փոխանցումն ստրկության նախնադարյան ձևվերից դեպի ճորտություն»:

Ամենայն դեպս, պետք է ընդունենք, Վոր խալկական հասարակությունը, հանդիսանալով ռազմա-պարագիտային ձևվի պետություն և պարունակելով մեծաքանակ ստրկություն, յուրատեսակ ստրկատիրական հասարակություն էր, Վորտեղ գոյություն ուներ նախիվ ճորտություն, մի հանգամանք, Վոր ընտրող էր Ասիայի սոցիալ-տնտեսական պայմաններին և ներկայացնում էր ստրկատիրության թերևս ֆեոդալիզմի ասիական տարբերակ:

V

Նյութական կուլտուրա

Խալկերը, շուրջ 300 տարի պետական կյանք ունենալով, կարողացել են զարգացնել այնպիսի մի կուլտուրա, Վորի մնացորդները, այսօր, հետզհետե յերևան գալով հնագիտական հետախուզումների շնորհիվ, վկայում են այդ ժողովրդի նյութական կուլտուրայի բարձր աստիճանի ու հոյակապության մասին: Այդ հնություններն են, որ մեծ մի հոգմից՝ արևմտյան ասիայի, իսկ մեծ մի հոգմից՝ արևելյան ասիայի հեթանոսական ու բուդդիստական հոգմերից: Միևնույն ժամանակ հեթանոսական կուլտուրայի կյանք գծերը: Միևնույն ժամանակ նաև արևելյան տարրեր, գլխավորապես ասորա-բաբելոնական կուլտուրայի կյանք գծերը: Միևնույն ժամանակ խալկական կուլտուրան իր զարգացման ընթացքում չի կարկամել ինքնամոլոր սահմանների մեջ, այլ խալկ ժողովրդի նվաճողական արշավանքների հետ տարածվել է դեպի հյուսիս, Արաքսի վրայով դեպի Անդրկովկաս և այստեղից էլ թափանցել

ե ավելի հեռուները, առևտրական ճանապարհներով մինչև Ռուսաստանի հարավային տափաստանները, վորտեղ արդի հաագիտությունը նշմարում ե այդ կուլտուրայի հետքերը:

Խաղերի կուլտուրայի զարգացման կենտրոնավայրը պետք ե համարել Վանի լճի մարզը ե մասնավորապես նրանց Տուշպա-Վան մայրաքաղաքը: Առաջիմ ղրպվածական հաագիտական պեղումներով այդ կուլտուրայի նյութական մնացորդները մեծ մասամբ հայտնաբերվել են հենց այդ վայրում: Խաղական հուշարձանները նկարագրվել են հայ հին մատենագիրներից մեկի, այն ե՝ Մովսես Խորենացու պատմության մեջ, վորտեղ, սակայն, Վանի հոյակապ հնությունները վերագրվում են ասորեստանյան առասպելական թագուհու՝ Շամիրամի շինարարական գործունեյությանը: Մովսես Խորենացուն, հետևապես նրա ժամանակվա հասարակությանը (VII—VIII դ.դ. մեր տարեթիվ.) արդեն անհայտ եր խաղերի յերբեմնի գոյության պարագան:

Առաջ ենք բերում Մովսես Խորենացու բավականի՝ ընդարձակ նկարագրից (գիրք II, գլ. 16) քաղվածորեն մի քանի բնորոշ կտորներ (թարգմանաբար զրաբարից):

«Շամիրամը հրամայում ե նախ շինել գետի ամբարտակը ապառաժներով ե խոշոր քարերով, ե կրով ու ավաղով միավորել, անշափ լսյնությամբ ու բարձրությամբ, վորը, ինչպես ասում են, հաստատ կա մինչև այսոր: . . . Նայելով քարերը ճարտարությամբ միմյանց կապող ավաղ ու կրին, նայողը կկարծե, թե ճարպ լինի ածած: . . . Նա շինում ե նույպես քաղաքի մեջ պետպես քարերից ե գույններից զարդարված կրկնահարկ ու յեռահարկ ընտիր ապարանքներ: . . . Գետի մի մասը բաժանելով անց ե կացնում քաղաքի միջով ամենայն պիտոյքի համար բուրաստաններ ու ծաղկոցներ ջրելու, իսկ մյուս մասը, ծովակի աջ ու ձախ ափերի մոտ քաղաքը ե նորա բոլոր շրջակայքը ջրելու: . . . Պարսպած գագաթի վրա Շամիրամը շինում ե ցածուկ, անագին, դժվարամուտ ե դժվարելանելի թագավորանիստ շենքեր, վորոնց կառուցվածքի ղրությունն ու վորպիսությունը վոչ վորեից չի հասել մեր ականջին ճշմարտությամբ, ուստի ե չենք կամենում պատմության մեջ զետեղել, բայց միայն կասենք, վոր թագավորական բոլոր գործերի մեջ, ինչպես լսել ենք, սա առաջին ե առավել փառավոր ե համարվել: . . . Իսկ արևի հան»

դեպ դարձած քարանձավում, վորի վրա այժմ վոչոք չի կարող
յերկաթով մի գիծ քաշել,—այնքան պինդ է նյութը,—Շամիրամը
զանազան պալատներ, ոթեաններ, գանձատներ ու յերկար վի-
հեր,—վոչոք չգիտե, թե ինչ նպատակի համար,—հրաշակերտեց:
Քարի ամբողջ յերեսի վրա, իբր գրչով հարթ մոմի վրա, շատ
գրեր գրեց, վորի միայն տեսքը զարմացնում է ամենքին»:
Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին, այստեղ ակ-
նարկում է ջրանցքաշինարարության, քարակոփության կիկլոպ-
յան կառույցքի և վերջապես բեեռագրերի վրա:

Ջրանցքաշինարարության հոյակապ գործ է Մենուա թա-
գավորի Վանում կառուցած ջրանցքը, վոր այսօր էլ գոյություն
ունի «Շամիրամ-սու» անունով և վոռոգում է քաղաքի այգես-
տանները: Այդ ջրանցքը մոտ 80 կիլոմետր յերկարություն ունի
և տեխնիկական չափազանց բարդ կառուցվածք է ներկայացնում,
վորի հունը փորված է բարձր տեղերում սեպ ժայռերի լանջե-
րին, իսկ ցածր տեղերում արհեստականորեն բարձրացած ամ-
բարտակների ու քարաշար պարիսպների սխտեմ է հանդիսա-
նում:

Նույնպիսի ջրանցքաշինարարական կոթող է Ռուսա II թա-
գավորի կառուցած մեծ ջրանցքը Վանի մոտ Թոփրակ-Կալեյում,
հսկայական ավազանով, վոր այսօր էլ գործում է ու հայտնի յե
Քեշիշ-գյուլ անունով: Նույն Ռուսայի մի այլ արձանագրու-
թյունից, վոր գտնվել է այժմյան Չվարթնոցի ավերակների մոտ,
յեղրակացվում է, վոր Ջանգու գետից, Յերևանի մոտ, խորունկ
ձորում, բազալտի մեջ փորված տոնելներով հանվել են ջրմուղ-
ներ, վորոնցից մեկն այսօր էլ վոռոգում է Յերևանի Դավա կոչ-
ված այգիները, իսկ մյուսը՝ Յերևանի ու Վաղարշապատի միջև
ընկած հողերը: Նմանապես ջրմուղներ են կառուցվել Արաքս
գետից Արարատյան դաշտի հարավային մասերը վոռոգելու նը-
պատակով, որինսկ՝ Արմավիր քաղաքի մոտ և այլն:

Քարակոփության կամ ժայռափորության մեջ խալիկըրը ցու-
ցաբերել են մեծ հմտություն ու ճարտարվեստ: Վանի դժվարա-
մատչելի ժայռերում փորված են սենյակներ, դահլիճներ, սան-
դուղքներ, վորոնք տանում են դեպի ստորին կամ վերին հար-
կերը: Այդպիսի ժայռակոփ շինություններ խալիկըրը կառուցել

են պատմական Հայաստանի բաղձաթիւ վայրերում՝ Խարբերդի, Հասանկիֆի, Բալուէի, հին Բայազետի մոտ և այլն:

Քարակոփության հետ սերտորեն կապված և քարտաշությունը, վոր նույնպէս հասել էր մեծ ճարտարվեստի: Այդ կողմից աչքի յեն ընկնում այսպէս կոչված կիլիկոյան կառույցքները: Խալդերը կատարեկապործված էյին հսկայական մեծության ու թանձրության քարերից, վորոնք անհատական մարդկային ուժով շարժել անկարելի չէր, պատեր շարելում, շատ անգամ առանց մածուցիկ կրով: Այդ կիլիկոյան քարերով, վորոնք արտաքուստ յերբեմն տաշած էյին լինում, յերբեմն ել անտաշ, կառուցում էյին բերդերի ու ամրոցների պատերը, բերդերի շուրջը բարձրացնում էյին այդ քարերից քաղաքային պարիսպներ: Քարտաշների կառուցած տաճարները, ինչպէս ակներև և Վանի մոտիկ Թոփրակ-Կալիյէ ավերակներից, ներկայացնում էյին ճարտարակերտական հոյակապ գործեր: Այդպիսի մի տաճարի պատկերը մեզ հասել և ասորեստանյան Սարգոն թագավորի քանդակագործ հուշարձաններից մեկի վրա տպավորված, վորն արտաքուստ սյունազարդ, առջևից դռնիկոններով, ճակատից ճարտարակերտված և իր ամբողջութեամբ մի մոնումենտալ շէնք և հանդիսանում:

Քարտաշները նույնպէս վարժ էյին գեղեցիկ զարդարանքներ շինել գույնզգույն քարերի գաւալորումով, վորից ստացվում էր յուրատեսակ մողայիք: Այդպիսի մողայիքով էր ծածկված յեղել Թոփրակ-Կալիյում պեղված տաճարի հատակը: Ինչպէս վերը տեսանք, գունավոր քարերից զարդարանքների մասին ակնարկում և նաև Մովսէս Խորենացին: Քարտաշության արվեստի կատարելագործումը հնարավորութուն էր ընձեռնում խալդերին կանգնեցնելու այն քարե կոթողները և բարձրաբերձ ժայռերի վրա հղկած այն յերեսները, վորոնք քանդակվում էյին սեպածև արձանագրություններով:

Մեծազագործությունն, ինչպէս արդեն ակնարկել ենք, հասել էր բարձր զարգացման: Բացի բաղձաթիւ առորյա պիտույքներից բավարարելու համար պատրաստվող պղնձե ու բրոնզե անոթներից ու յերկաթե գործիքներից ու զենքերից, խալդ վարպետները պատրաստում էյին զարդարանքի վոսկե ու արծաթե իրեր, պղնձե ու բրոնզե ձուլվածքներ: Հնագիտական հետախուզումների շնորհիւ հայտնաբերված վոսկեըչական, արծաթագոր-

գական ու ձուլագործական իրերը վկայում են գեղարվեստական նրբության ու տեխնիկական բարձր աստիճանի մասին: Մեզ հասել են պեղածո մեղալյոններ, արձանիկներ, կանաչի գարգեր, թագավորների բրոնզե վահաններ քանդակազարդ նկարներով, գահերի գեղեցիկ վռտներ և այլն, բոլորն էլ փայլուն արվեստի ապացույցներ: Ասորեստանյան ու խալդական սեպագրություններում հիշատակվում են աստվածների ու թագավորների քանդակազորձ և ձուլածո արձաններ, վորոնք գտնվում էյին խալդերի կրոնական կենտրոնավայր Մուսասիրի տաճարում, վորի քանդակ-նկարը մեզ ավանդել է, ինչպիս վերն ակնարկել էնք, Սարգոն թագավորը:

Վերջապես կանգ առնենք կավագործության կամ կերամիկայի վրա, վորը խալդական արհեստագործության մեջ աչքի ընկնող տեղ եր բռնում: Հնագիտական հետախուզումներով հայտնաբերվել են կավե թրծած աղյուսիկներ, վորոնք այն ժամանակ ծառայում էյին գրելու համար, նման մեր այժմյան թղթին: Բայց ավելի ուշագրավ են կավե զանազան անոթները, վորոնց մեջ տեսնում ենք ա՛ռազին կարասներ, նկարազարդված յերիգավոր գոտիներով, նաև կարմիր գույն տված ամաններ, գլխավորապես սափորներ: Վերջինները խալդական կավագործությանը հատուկ տեխնիկայի պատկանելիք են և հին կերամիկայի պատմության մեջ աչքի յեն ընկնում իրենց բնորոշ գծերով:

Մալդական նյութական կուլտուրայի այդ հետաքրքիր պատկերը մենք ուրվագծեցինք միայն այն հնագիտական տվյալների հիման վրա, վորոնք հայտնաբերվել են հատ ու կենտ պեղումներով ու զիպվածական գյուտերով: Դժբախտաբար մինչև այսօր չեն կատարվել սխառեմատիկ ու գիտականորեն ձեռնարկված պեղումներ թե Վանի շրջանում և թե միզանում, որինակ՝ Արմավիրի բլրում, վորոնք խալդական կենտրոններ են յեղել: Անտաքակույս, այդպիսի պեղումները կը հարստացնէյին մեզ անհրաժեշտ հնագիտական տվյալներով, կլրացնէյին նյութական կուլտուրայի մեզ հասած մնացորդները և ավելի մեծ լույս կսփռէյին խալդերի պատմության մութ էջերի վրա:

Խալդական հասարակության գաղափարախոսությունը

Ինչպես արևելյան մյուս հասարակութուններում, այնպես էլ խալդերի հիմնական գաղափարախոսական վերնաշինքը արտահայտվում էր կրոնում: Խալդերի սոցիալ-տնտեսական կազմին համապատասխան զարգացել ու ձևավորվել է նաև նըրանց հոգևոր կուլտուրան: Խալդերի կրոնական սիստեմը, ըստ իր ելույթյան, ներկայացնում էր յերկրագործական ու անասնապահական տնտեսական գործունեությունից բղխող հավատալիքների աշխարհ, իսկ ըստ արտաքին ձևավորման նա արտահայտում էր նրա հասարակական կառույցը: Այդ տեսակետից բնորոշ է վանի մոտ գտնվող «Մհերի դուռ» կամ «Չոպան-գափուսի» կոչված խորհրդավոր ժայռը իր քարե սեպագիր տախտակով, վորտեղ արձանագրողը մի առ մի թվում է խալդյան 63 աստվածների անուններ՝ սրանց ատիժմանական դասավորումով և սրանց վերաբերյալ կրոնական պաշտամունքի ու հարգման կարգերով: Աստվածների այս մեծածախ համախմբումը ցույց է տալիս խալդական պետությունից կազմավորման բովանդակ պատկերը: Խալդ պետությունը կազմվել էր զանազան ցեղերի ու մանր իշխանությունների նվաճումով, վորոնք յենթարկվել էին Խալդ թագավորի կենտրոնական իշխանությունը: Այդ ցեղերն ու իշխանություններն ունեցել են իրենց սեփական աստվածները, վորոնք իբրև նվաճվածների նույնպես միացվում են խալդական գիրիչքող կրոնին և, համաձուլվելով, կազմում են միասնական պանթեոն, ինչպես վոր կազմվել էր միասնական պետություն: Այդ 63 աստվածները շարքում միայն մեկ կին ենք հանդիպում՝ Շարիս աստվածուհին, վոր նախնական «մեծամայրն» էր յինելու, հոմանիշ հեթանոսական հիբրեյկային կամ ասորական Իշտարին: Այս պարագան վկայում է, թե ինչ բացարձակ հայրիշխանական (պատրիարխատական) բնույթ էր կրում հասարակական, բնատնական կազմը, անհեղինելով նախորդ հնագույն մատրիարխատի—մայրիշխանությունից բոլոր նշանները:

Խալդական գերագույն աստվածն էր Խալդի, վորպիսի անունով էր կոչվում և ինքը՝ Ժողովուրդը: Ուրեմն այդ աստ-

վածն ամբողջ ժողովրդի անվանագիրն եր և ներկայացուցիչը: Այդ աստծու անունով և ի պատիւ նրան են կատարվում բոլոր նվաճումները, շինարարությունները: Նա հայր եր բոլոր մնացյալ աստվածներին, պաշտպան եր ուրարտական ժողովրդի, հովանավորող՝ թագավորներին, հետևապես աստված եր ուժին, քաջության ու պատերազմի, վերջապես նա աստված եր յերկնքի: Պալլի աստծու հետ ելին՝ Թեյիսպաս ուղի ու ջրի աստվածը և ապա Արգինի—արևի աստվածը: Թեյիսպաս իր անունով հիշեցնում և հեթիտական Թիշուպ աստծուն. Թեյիսպասից ել ծագում և խալդական մայրաքաղաք Տուշպայի անունը, այժմյան Վանը: Այս յերեք աստվածները կադմում ելին գերագույն յերրորդություն խալդական պանթեոնի մեջ: Պալլի աստծու պաշտամունքի գլխավոր կենտրոնն եր Մուսասիր քաղաքը, վորդանվում եր Վանի լճից հարավ-արևելյան ուղղությամբ գեպի Ուրմիայի լիճը: Այստեղ ելին դիմում խալդական թագավորները յերկրպագելու՝ տարած հաղթություններից հետո:

Պալլ աստվածը յերկրի վրա մարմնավորվում եր թագավորի անձնավորությամբ, ուստի Բիայնայի թագավորը կրում եր «աստվածային» տիտղոս: Թագավորը համարվում եր յերկրային աստված, ուստի տակավին նրա կենդանության ժամանակ կանգնեցնում ելին նրա արձանը տաճարներում աստվածային կուռքերի շարքում: Թագավորը, լինելով Պալլ աստծու յերկրային ներկայացուցիչը, նրա փոխանորդը, միաժամանակ դառնում եր նրա պաշտամունքի գերագույն քուրմը, հետևապես նրա իշխանությունը կրում եր վոչ միայն մարմնավոր, այլև հոգևոր բնույթ: Թագավորի մայրաքաղաք Տուշպան համարվում եր աստծու աթոռանիստ, «Պալլի քաղաք», ամբողջավայրերը, չեթե նույնիսկ նրանք հեռու ելին մայրաքաղաքից, կոչվում ելին «գրունք Պալլի»: ամբողջ պետությունը հայտնի յեր «Պալլի (այսինքն աստծու) յերկիր» անունով:

Այս կրոնական գաղափարախոսությունը տալիս եր խալդական պետությանը յուրահատուկ բնույթ, առգործելով ամբողջ պետականությունը թեոկրատական վոգով, աստված-պետական իշխանություն գաղափարով:

Խաղաղական հասարակութեան պատմութիւնը և մանա-
վանդ խաղաղական կուլտուրան մեծ նշանակութիւն են ստա-
նում հայ ժողովրդի պատմութեան համար: Խաղաղական նախա-
հայկական պատմութիւնն է յեղել, վորին հետագայում հաջորդել
է հայկական պատմութիւնը: Խաղաղքն այն ժողովուրդն է, վոր
նշանավոր տեղ ունի հայ եթնոգէնիկ մեջ:

Խաղաղական կուլտուրան անընդմիջական նախահայ կուլ-
տուրան է, վոր, մի ժամանակ տիրապետելով Հայկական բար-
ձրամշակութեան, հետագայում դարձել է նաև հայ ժողովրդի
կուլտուրայի հիմնական առարձը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Б. Турав—История древнего Востока, т. II, 42 33—40.
1936 թ.
2. И. Мещанинов—Халдоведение, история древнего Вана.
Баку, 1927.
3. История древнего мира, т. I. Древний Восток, 42 437—
443.
4. Հ. Սանտարճյան—Ասորեստանյան և պարսիկ սեպագիր արձա-
նագրութիւնք. Վիեննա, 1901 թ.
5. С. Lehmann-Haupt—Materialien zur älteren Geschichte Ar-
meniens und Mesopotamiens, հայերեն թարգմանված՝
«Բազմավեպ» ամսագիր, Վիեննայի, 1908 թ. 42 109—
114, 197—199, 299—302, 440—444, 486—490,
550—554.:
1909 թ. 42 8—11, 67—73, 102—10



Բրոն, 1940

13467

Նկատված զրկականներ

Եջ	Տող ներք.	Տող զեր.	Տողված	Պետք է լինի
12	14	—	Ս. որևտան	Ասորեստան
23	—	7	տենում ենք	տենում ենք
28	—	12	Тыраб	Тыраев

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0465537

[154]

ԳԻՆԸ 1 Ռ.

178

ЦЕНА

A II

34110